30 ապրիլի 2020 թվականի N 686 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1382-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1382-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-4-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակի «Ավստրիա, Իսպանիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

2) 5-րդ, 9-11-րդ, 18-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 35-րդ, 38-րդ, 69-74-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակի «Ավստրիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

3) 7-րդ, 17-րդ, 22-րդ, 31-33-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակի «Ավստրիա, Գերմանիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

4) 8-րդ կետի «Ծագման երկիրը» սյունակի «Ավստրիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Չեխիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

5) 12-15-րդ, 112-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակի «Իտալիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

6) 34-րդ կետի «Ծագման երկիրը» սյունակի «Ավստրիա, Իտալիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

7) 36-րդ կետի «Ծագման երկիրը» սյունակի «Գերմանիա, Իտալիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

8) 39-68-րդ, 75-76-րդ, 84-րդ, 115-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակի «Պորտուգալիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

9) 77-րդ, 80-րդ, 81-րդ, 86-89-րդ, 94-րդ, 95-րդ, 97-րդ, 99-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակի «Շվեդիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

10) 78-րդ, 79-րդ, 85-րդ, 90-93-րդ, 98-րդ, 113-րդ, 116-120-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակի «Չեխիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

11) 82-րդ, 96-րդ, 100-108-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակի «Գերմանիա, ԵՄ» բառերը փոխարինել «ԵՄ» բառով.

12) 39-63-րդ կետերի «ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը» սյունակի «8504230001» ծածկագիրը փոխարինել «8504230009» ծածկագրով.

13) 57-րդ, 58-րդ կետերի «Քանակը» սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով.

14) 68-րդ կետի «ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը» սյունակի «9030390009» ծածկագիրը փոխարինել «9030899009» ծածկագրով.

15) 77-րդ, 78-րդ կետերի «Քանակը» սյունակի «1» թիվը փոխարինել «4» թվով.

16) 79-րդ կետի «Քանակը» սյունակի «1» թիվը փոխարինել «10» թվով.

17) 80-82-րդ կետերի «Քանակը» սյունակի «1» թիվը փոխարինել «12» թվով.

18) հավելվածը 120-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 121-124-րդ կետերով՝

«121.	8410900001	Հիդրավլիկ տուրբիններ, ջրային անիվներ և կարգավորիչներ դրանց համար--հիդրավլիկ տուրբիններ և ջրային անիվներ---թուջից ձուլված կամ պողպատից ձուլված՝ 25 000 կՎտ–ից ավելի հզորություն ունեցող հիդրավլիկ տուրբինների համար	VO8 - 8.2 New draft tube cones for Shamb Unit 1 and Unit 2 as per offer TA1830.03 ()	հատ	2	ԵՄ	7 459 200
122.	8410900001	Հիդրավլիկ տուրբիններ, ջրային անիվներ և կարգավորիչներ դրանց համար--հիդրավլիկ տուրբիններ և ջրային անիվներ---թուջից ձուլված կամ պողպատից ձուլված՝ 25 000 կՎտ–ից ավելի հզորություն ունեցող հիդրավլիկ տուրբինների համար	VO8 - 8.6 New turbine shaft for Shamb Unit 2 as per offer TA2015.02 ()	հատ	1	ԵՄ	58 240 000
123.	8410900001	Հիդրավլիկ տուրբիններ, ջրային անիվներ և կարգավորիչներ դրանց համար--հիդրավլիկ տուրբիններ և ջրային անիվներ---թուջից ձուլված կամ պողպատից ձուլված՝ 25 000 կՎտ–ից ավելի հզորություն ունեցող հիդրավլիկ տուրբինների համար	VO8 - 8.7 Turbine bearing for Shamb - new segment parts and new bearing cover for Units 1 and 2 as per offer TA2018.01 ()	հատ	2	ԵՄ	43 187 200

124.	8410900001	Հիդրավլիկ տուրբիններ, ջրային անիվներ և կարգավորիչներ դրանց համար--հիդրավլիկ տուրբիններ և ջրային անիվներ---թուջից ձուլված կամ պողպատից ձուլված՝ 25 000 կՎտ–ից ավելի հզորություն ունեցող հիդրավլիկ տուրբինների համար	VO8 - 8.8 New coupling bolts turbine shaft - generator shaft for Shamb Unit 2, as per offer TA2031.02 ()	հատ	1	ԵՄ	13 552 000».

19) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «6 392 618 400» թիվը փոխարինել «6 515 056 800» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. մայիսի
Երևան